ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Հայերը ռուսաց թերթերում։ Հայոց Խարեդ. Էնկերութեան ընդհանուր ժողովները.—Արհեստաւորաց ուսումնարանը Թիֆլիսում։ Դերասան Պետրոսեան։—«Վարժուհի»։ Ադամեանի օգտին ցոյցեր։

Մայրաքաղաքեան թերթերը մէկը միւսի յետևից նոր տարուց դէս զբաղուեցին հայերով, բայց զբաղուեցին միմիայն նորա համար, որ հին զրպարտութիւնները կրկնեն և հների վերայ նորերը աւելացնեն։ Զարմանալի բան է, թէ ինչու մեզ չեն արժանացնում այս բաւարարութեան, որ հետաքրքրեն և իմանան Հայերի առաջդիմութեան գործը Ռուսաստանում, գործ, որի վերայ ամբողջ սերունդներ աշխատել են ամենայն անձնուիրութեամբ։

Այդպէս է վարուում մեզ հետ մանաւանդ Մոսկովսկիյա Վեդոմոստի թերթը, որը հայերին ուղղակի «վնասակար տարր» է յայտարարում։ Կարելի է արդեօք այդքան առանց ցերեմոնիայի վերաբերուել դէպի մի ժողովուրդ, որը հաւատարիմ հպատակ է ռուսաց թագաւոր-կայսրին, մի ժողովուրդ, որը վայելում է քաղաքացիական բոլոր իրաւունքները և կրում համապատասխան բոլոր պետական պարտականութիւնները, մի ժողովուրդ, որ դաւանում է ամենքից լարգուած եկեղեցական կրօնները, մի ժողովուրդ, որը Կովկասում հռչակուած է թէ որպէս ամենադերազանց գիւղացի-երկրագործ, թէ որպէս լաւ արհեստաւոր, թէ որպէս լաւ բանուոր, թէ որպէս ճարպիկ վաճառական, թէ որպէս հնազանդ և պիտանի զինուոր, մի ժողովուրդ վերջապէս, որի բազմակողմանի կուլտուրական ընդունակութիւնների մասին վկայում են հները և նորերը և որի համար փակ չեն մարդկային ազնուագոյն ձգտումները?

Մոսկովսկիյա Վեդոմոստին հնարում է մի այսպիսի անլուր սուտ, իբր թէ հայ կապիտալիստները իրանց ձեռքն են դցած Անդրկովկասի

(մանաւանդ Վրաստանի) կալւածների մեծ մասը։ Որ ստատիստիկայից իմացուեց այդ բանը, և մինչ հարկ կայ հաստատելու, թէ Անդրկովկասում հողային կալւածատիրութիւնը, որպէս առաջ, նոյնպէս և այսօր ամենամեծ մասամբ վրաց և թուրք աղնւականների ձեռքումն է?

Գանք երկրագործ դասակարգին։ Այժմ, երբ մեր երկիրը նոյն իսկ պաշտօնական մարդկանցից շատ թէ քիչ հետաքրքրուած է, հաստատ է, որ Անդրկովկասում բնակւող բոլոր ազգերից հայերը ամենալաւ երկրագործներն են։ Սա էլ հաստատուած է որ շատ տեղերում հայ գիւղացիները, իրանց հողի սակաւութեան պատճառով, մշակում են թուրքերի և ռուս գաղթականների հողերը, տասանորդական կամ այլ պայմաններով։

Բայց ոչ միայն հայերը լաւ հողագործներ են, այլ և նոցա թիւը շատ է։

Այս բոպէին ես չեմ կարող բերել բոլոր թւանշանները, որ կը հաստատեն ասածս, բայց ես կը բերեմ գոնէ մի երկուսը։ Օրինակ, վերցնենք ձեռքներս «Сводъ Матеріаловъ по изученію экономическаго быта государственныхъ крестьянъ Закавказскаго края, томъ II, Тифлисъ, 1887. Այդ պաշտօնական հրատարակութեան 27-րդ երեսում գրուած է բերուած, թէ Անդրկովկասի հինգ նահանգներում (ուրեմն ի բաց առած Դաղստանը և Զաքաթալի, Կարսի ու Բաթումի շրջանները) որքան գիւղացիք կան միմիայն պետական հողերի վերայ և թէ նոցանից որքանը ինչ ազգից են։ Այդտեղ ասուած է, որ Անդրկովկասի հինգ նահանգներում պետական հողերի վերայ բնակւում են ընդամենը 1,671,230 հոգի երկու սեռից, որոնցից՝

Թուրքեր.	547,444	հոգի,
Հայեր.	478,809	»
Ռուս վրացիք.	152,822	»
Իմերելներ.	106,888	»
Դուրիացիներ.	14,354	»
Քուրդեր.	58,299	»
Թաթեր.	88,852	»
Թալըշներ	29,617	»
Լեզգիներ	37,207	»
Ռուսներ.	44,531	»
Յոյներ.	17,027	»

Միւս ցեղերից այստեղ թւանշաններ առաջ չեմ բերում, քանի որ նոցանից ոչ մէկն էլ տասը հազարի չի հասնում։ Ուրեմն պարզ է, որ մեր գիւղական երկրագործ ազգաբնակութիւնը կազմում են գլխաւորապէս թուրքերը, հայերը և վրացիք։ Այդ ցուցակում թուրքերը աւելի մեծ թիւ են կազմում քան հայերը, բայց մի մոռացէք և այս, մինչ որ այժմ ցայտնի բոլոր պաշտօնական տեղեկութիւնների մէջ թուրքերի թիւը մեր

երկրում առհասարակ աւելի շատ է դուրս բերուած քան հայերի թիւը։ Օրինակ, վերցրէք հէնց Кавказскій календарь 1889 թւականի, ուր դուք կը տեսնէք հայերի թիւը ամբողջ Կովկասում նշանակուած 803,696, իսկ թուրքերի թիւը մի միլիոնից աւելի։ Ես ինքս ի հարկ է չեմ հաւատում այդ թւերին, բայց և այնպէս համեմատութեան համար նոքա պէտքական են։ Եւ ես այդ թւերը առաջ բերի միմիայն ապացուցանելու համար, որ գոնէ մեր երկրի, հինգ նահանգներում պետական հողերի վերայ բնակող հայերը կազմում են Անդրկովկասի բոլոր հայերի աւելի մեծ տոկոսը (այն է մօտ 60 %)։ քան թէ թուրք գիւղացիք, որոնք նոյն նահանգների պետական հողերում կազմում են ամբողջ երկրի թուրքերի միմիայն մօտ 50 տոկոսը։

Ի հարկէ, գիւղացիք մեզանում միայն պետական հողերի վերայ չեն, այլ և կալուածատիրական հողերի վերայ և գուցէ կալուածատիրական կոչուած գիւղացիների թիւը նոյնքան լինի որքան պետական գիւղացիների թիւն է, բայց քանի որ այս բոպէին առաջինների թիւը յայտնի չէ՝ մանրամասնութիւնների մէջ մտնելն էլ դառնում է աւելորդ։

Հայոց Բարեգործական Ընկերութիւնը Կովկասում մի ամսաւ ընթացքում երեք անգամ նիստի կոչուեց՝ տարեկան ընդհանուր ժողովի գործերը քննելու և վերջացնելու համար։ Այդ գործերը՝ Խորհուրդի և Ընկերութեան ճիւղերի նախահաշիւները քննելն ու հաստատելն էր, Ընդհանուր Ժողովի նախագահի և Խորհուրդի չորս անդամներին ու կանդիդատներին ընտրելն էր։ Ես իմ կողմից չեմ ցաւում որ այդ գործերը փոխանակ մէկ անգամում՝ երեք նիստերում միայն կարելի եղաւ կատարել։ Ես կարծում եմ որ մի Ընկերութիւն, որը 15 քաղաքներում ճիւղեր ունի, արժէ որ տարէնը նորա գործերի համար մի քանի անդամ ժողովւեն։ Եւ յամենայն դէպս հազար անդամ աւելի լաւ է երեք կիրակի կորցնել 15 ընկերութիւնների գործերի հետ ծանօթարալու համար, քան թեթև կերպով անցնել նոցա վրայով։ Ուրեմն այդ դեռ մի ցաւ չէ, այլ թերևս դորա համար հարկաւոր է շնորհաւորել Ընկերութեան Թիֆլիսի անդամներից նոցա, որոնք պարտք են համարում ներկայ լինել այդ ժողովներին։ Եթէ կայ իսկապէս ցաւալի հանգամանք, այդ սա է՝ Հայոց Բարեգործական ընկերութիւնը իւր լայն ծրագրով և իւր այժմեայ 15 ճիւղերով ունի ընդամենը տարեկան շուրջ 15000 ռուբլի միայն։ Հասկանալու համար այդ գումարի բոլոր ոչընչութիւնը, պէտք է ի նկատի առնել որ դա, իւր լայն ծրագրով և իրաւունքներով՝ միակն է ամբողջ Կովկասում և որ այդ այն օրգանն է, որի միջոցով Կովկասի հայը կարող է հիմնարկել այլ և այլ հասարակական գործեր և պահպանել կամ նրանց օգնութեան հասնել, որպէս նաև օգնել տառապեալներին աղէտների ժամանակ։ Գրադարաններ, ընթերցարաններ, դպրոցներ, աղքատների ապաստարաններ, ուսանողների օժանդակու-

թիւն, հասարակական արհեստանոցներ և այլն և այլն, այդ բոլորի բաղդը Անդրկովկասում մի մեծ չափով կապուած է Հայոց Բարեգործական Ընկերութեան վիճակի հետ։ Եւ ինչ կարելի է շինել այդ աւեանով, եթէ այդ Ընկերութիւնը, այդ բոլորի և ամբողջ Կովկասի համար ունի մսխելու համար տարեկան միմիայն որ և իցէ 15000 բուբլի, այսինքն այնքան, որքան տարեկան ունի մի հատ աղքատիկ միջնակարգ հայ դպրոց, և կամ երբորդը այն եկամուտի, որ ունի օրինակ Ներոիսեան դպրոցը! Բարեգործական Ընկերութիւնը, եթէ միայն լաւ կարդաք նորա կանոնագրութիւնը, մի կանոնագրութիւն, որ հաստատուած է բարձրագոյն իշխանութիւնից, այդ Ընկերութիւնը ասում եմ, լուսաւորութիւն տարածելու ահագին լծակ է, որից միայն վաղօրօք օգտուել է հարկաւոր, որ չեղող ուշ չը լինի։ Եթէ չը լինէր այդ Ընկերութիւնը, հաւատացնում եմ որ մի այդպիսի Ընկերութիւն հիմ նարկելու դաղափարը արծարծելու և բարձր իշխանութիւնից թոյլաւորութիւն ստանալու համար մամուլը պատրաստ կը լինէր տարին տասներկու ամիս լօդուածներ դրել, հասարակութեան լաւագոյն անդամները իրանց մտածողութեան առարկայ կը դարձնէին շարունակ, և ամենքը կ'ասէին՝ տեսէք թէ ինչեր կ'անէինք, եթէ մեզ այդպիսի իրաւունքներ տալը չը զլանային։ Բայց ահա և Ընկերութիւնը կայ և նա արդէն տասնեակ տարի գոյութիւն ունի. այս տարի նա տօնելու է իւր տասնամեակը։ Ինչ միջոցներ է տալիս հասարակութիւնը այդ նշանաւոր Ընկերութեան՝ իրագործելու համար այն դիտաւորութիւնները, որ ամենքի ցանկութիւններն են և որոնք կանոնագրութեան համաձայն՝ Ընկերութեան նպատակն են կազմում։ Որ և իցէ 15000 բուբլի կամ մի փոքր աւել։ Ի հարկէ այդ գումարով միայն այն կարելի է անել ինչ կատարում է Ընկերութիւնը այժմ. այսինքն՝ բաւականի աննշան գործ, եթէ միայն մոռանալու չը լինենք որ այստեղ մեր խօսքը ամբողջ Կովկասի մասին է։ Այս բոպէին իմ աչքի տակն են Ընկերութեան 13 ճիւղերի ել և մուտքի հաշուեցուցակները. այդ հաշուի մէջն են՝ Թիֆլիսը, Ախալքալաք, Նոր-Բայազիդ, Դերբենդ, Բաթում, Արտին, Կաղզուան, Արմաւիր, Գորի, Շուշի, Ախալցխայ, Թելաւ, Երևան, ուրեմն բացառութեամբ Ալեքսանդրապոլի վաղարշապատի և Ղարսի՝ ամբողջ Ընկերութիւնը։ Դէ ես այստեղ առաջ կը բերեմ այն բոլոր ծախքերը որ ենթադրուած է անելու ներկայ 1891 թուականին այդ բոլոր 13 քաղաքներում.

Ուսումնարաններ պահպանելու	1580	ր.
Արհեստներ զարգացնելու	797	»
Աշակերտներին ու ուսանողներին թոշակներ տալու .	3311	»
Գրականութիւն ծաղկացնելու	120	»
Ընթերցարաններ և դրադարաններ պահելու	2596	»
Հիւանդանոցների համար	422	»
Տառապեալներին օգնելու	630	»
Նպաստ ազգօգուտ ընկերութիւններին.	0	»

Կոպէկները չեմ հաշուում, չեմ հաշուում նաև դիւանական ծախք 1315 բուբլին։ Ուրեմն այդ բոլոր 13 քաղաքներում Ընկերութիւնը կարողութիւն ունի միմիայն մօտ 9-400, իսկ Աղեքսանդրապոլի և Ղարսի հետ միասին՝ մօտ 11.000 բուբլի մսխելու։

Այսպիսի փաստերի դիմաց մարդուս մնում է միայն խղճալ. բայց ում վերայ? Ուրիշները թող խղճան Ընկերութեան վերայ. բայց ես, որ գիտեմ թէ ամեն բանում հասարակական գործերը այսպէս են, ես խղճում եմ միայն ազգիս վերայ։

Մի շատ համակրելի հիմնարկութիւն, որպիսին է Թիֆլիսի քաղաքային արհեստաւորաց ուսումնարանը, կատարեց իւր տարեկան ակտը փետրուարի 3 ին։ Այս ուսումնարանի գոյութիւնը քաղաքային ինքնավարութեան հետևանքներից մէկն է, և բնական է այդ պատճառով որ քաղաքում թերևս ամենից ժողովրդականը նա է։ Գաղափարը, արծարծուած նախկին քաղաքագլուխ իշխ. Նեազոն Թումանեանցից, իրագործուեց միայն 1880 թուականին, այնպէս որ 1890 թվին դպրոցը բոլորեց իւր առաջին տասնամեակը, որի կարճաւոտ հաշիւը կարդաց դպրոցի տեսուչ պր. Խարկով։

Թիֆլիսի քաղաքային արհեստաւորաց դպրոցի կուրսը չորս տարուայ է։ Աշակերտները այդ ժամանակուայ ընթացքում անցնում են թէ թէորիական և թէ գործնական առարկաների կուրս։ Թէորիական առարկաներն են՝ սրբազան պատմութիւն, մայրենի լեզու, ռուսաց լեզու, թուաբանութիւն, երկրաչափութիւն, գծագրութեան հետ միասին, նկարչութիւն, բնագիտութիւն, տեխնոլոգիա աշխարհագրութիւն, հաշուապահութիւն և գեղագրութիւն։ Գործնական մասը կազմում են՝ մետաղագործութիւն (դարբնային և մետաղա-փականագործային), ձուլարանային և ատաղձագործային՝ փայտա-փականագործութեան հետ։

Դպրոցի ամենահամակրելի կողմերից մէկը այն է, որ բոլոր թէորիական առարկաները, բացի ռուսաց լեզուից, ռուսաց պատմութիւնից և ռուսաց աշխարհագրութիւնից, անցնում են մայրենի լեզուով։ Այդ պատճառով ամեն մի դասատուն բաժանուած է երեք բաժանմունքի՝ հայերի, վրացիների և ռուսների համար։

Այս սկզբնական տասնամեակում դպրոցը դուրս է թողել աւարտածներ 6 անգամ, թուով 112 հոգի, ուրեմն տարէէնը դուրս է թողնում նա 18—20 հոգի։ Հայերի, վրացիների և ռուսների թիւը բաւականին համապատասխան է քաղաքումս ապրող այդ երեք ազգերի թուերին, և, ինչպէս սպասելի էր, ամենից շատը՝ հայերն են, յետոյ վրացիք, ապա ռուսներ և յետոյ միւս ազգութիւններ. Եւ իրօք այն 112 աւարտածներից՝ 50-ը հայեր են, 33 ը վրացիք, 26-ը ռուսներ, 3-ը այլ ազգութիւններից։

Աւարտածներից ամեն մէկը նստում է քաղաքին 2.200 ռուբլուց աւելի։ Օրինակ անցեալ 1890 թուականին աւարտածների թիւն էր 14 հոգի, իսկ քաղաքը մսխել էր դպրոցի վերայ 31,660 ռուբլի, որ ասել է թէ քաղաքին ամեն մի աւարտած նստել 2.261 ռուբլի։ Պէտք է ասած որ ուսումը ձրի է այդ դպրոցում. և դեռ աւելի՝ աշակերտները ձրի ճաշում են դպրոցում սեպտեմբերից սկսած մինչ մայիսի վերջը, այսինքն մինչ ամառուայ արձակուրդը. և այդ ձրի ճաշի համար քաղաքը վճարում է ամեն մի աշակերտի համար օրական 15-ական կոպէկ։

Այն 113 աւարտածներից ամենամեծ մասը, այն է 72 հոգի փականագործներ են, 34-ը հիւսն (դուլգար), 3-ը ձուլիչներ և 2 հոգի դարբիններ։

Որ այդ աւարտած արհեստաւորները պարապ չէին մնալ՝ ինքն ըստ ինքեան հասկանալի է. նոցանից 7 հոգի ալժմ արհեստների ուսուցիչներ են միջնակարգ և տարրական ուսումնարաններում, 20 հոգի մաշինիստների օգնականներ են Անդրկովկասեան երկաթուղու գծի վերայ, 40 հոգի բանում են երկաթուղու և Թիֆլիս քաղաքի մասնաւոր արհեստանոցներում, 26 հոգի անկախ արհեստանոցներ են թէ քաղաքներում (18 հոգի) և թէ գիւղերում (8 հոգի)։ Մնացածների մասին տեղեկութիւններ չեն ստացուել։

Տեսչի հաշիւը տեղեկութիւններ է տալիս նաև այն վարձատրութիւնների մասին որ ստանում են դպրոցում աւարտածները։ Այսպէս իմանում ենք ի մեծ մխիթարութիւն շատ ծնողների, որ մաշինիստների օգնականները ստանում են ամսական 65—70 ռուբլի, արհեստանոցներում աշխատողները՝ 30—50 ռուբլի, արհեստների ուսուցիչները՝ 40—60 ռուբլի։ Անկախ աշխատողների մասին տեղեկութիւնները պակասում են։

Աշակերտների թիւը ամեն տարի հաւասար չի լինում, որպէս երևում է այս ցուցակից՝

1885	թուականին	աշակերտների	թիւն էր	. . . . .	246 հոգի
1886	»	»	»	. . . . .	222 »
1887	»	»	»	. . . . .	193 »
1888	»	»	»	. . . . .	205 »
1889	»	»	»	. . . . .	194 »
1890	»	»	»	. . . . .	218 »

Այդ հինգ տարուայ ընթացքում հայ աշակերտների թիւը կազմել է ընդհանուրի 41 տոկոսը, վրացիները 31%, ռուսերինը 23, այլ ազգեր 4%. բայց հետաքրքրական է որ՝ աւարտածներից հայերը աւելի մեծ տոկոս են կազմել, որ նշանակում է թէ նոքա ոչ միայն թուով շատ են, այլ և աւելի առաջադէմ։

Որպէս անցեալ քրոնիկում յիշատակած էի, դերասան պ. Պետրոսեանցի ներկայացումը կայացաւ յունուարի 16-ին։ Աղամեանի ժամանակներից դէս ոչ ոք հայ դերասաններից չէր վստահացել Ուրիէլ Ակոստայի նման մի պատասխանատու դերում բեմ դուրս դալ Թիֆլիսի հասարակութեան առաջ։ Բայց պ. Պետրոսեանը իւր առաջին ներկայացումից առաջ մի քանի կոնցերտներում արդէն մասնակցել էր ոտանաւորներ արտասանելով, որի մէջ նա իրան ցոյց էր տուել շնորհքով և արհեստը մի յայտնի կատարելագործութեան հասցրած դերասան։ Մասնակցելուց յետոյ սիրողների ներկայացումներից մէկում, նա, կարելի է ասել, որ արդէն նպաստաւոր կարծիք էր կազմել տուել իւր մասին, գոնէ այն չափով, որ, երբ նա հրատարակեց «Ուրիէլ Ակոստա» դրամայի ներկայացման ագիչը, այդ ընդունեց որպէս հրաւէրք քննութեան փորձի։ Եւ պէտք է վստահանած որ պ. Պետրոսեանը յաջութեամբ դիմացաւ փորձին։ Նորա խաղը այնպէս էր որ կարելի էր նայել և հեաաքրքրութեամբ հետեւել որան։ Երիտասարդ դերասանը ունի մի քանի յատկութիւններ՝ բեմին յարմար արտաքին տեսք, դուրեկան ձայն, մասաւոր շարժումներ, և եթէ աւելացնէք այդ բոլորի վերայ նաև այն, որ նա սերտում է պատրաստում է իւր դերը, այդ բոլորով մենք կը ստանանք այն, ինչ հաղադիւտ է մեր դերասանների մէջ։ Առ այժմ այս անկասկած է որ պ. Պետրոսեանը մի շատ գնահատելի ոյժ է մեր թատրոնական բեմի համար և որ նա արժանի է ուշադրութեան և խրախուսանքի հասարակութեան կողմից։ Այն մի շարք ներկայացումները որ նա սկսել է տալ մինչ մեծ պասը—յուսով եմ որ պատուով կը վերջացնէ, օգնութեամբ իւր ընկերակիցների և հասարակութեան։ Գուցկովի «Ուրիէլ Ակոստայից» յետոյ, նա տալիս է Շիլլերի «Աւազակները», վերցնելով իւր վերայ Կարլ Մոորի դերը, առ այժմ բաւականաչափ պատրաստած չը համարելով իրան Ֆրանցի աւելի պատասխանատու դերի համար։

«Ուրիէլ Ակոստայ»-ին շուտով յաջորդեց պր. Զմչկեանի «Վարժուհին», Բանկային թատրոնում։ «Վարժուհին» սորանով արդէն երկրորդ անգամն է ներկայացնում։ Առաջին անգամ ներկայացնելու առիթով ես նկարեցի նրան մի մանրամասն քննադատութիւն («Մուրճ» 1890 թ. № 6), այնպէս որ այս անգամայ առիթով ես բաւական եմ համարում պարզ յիշատակութիւն անել ու անցնել։ Կատարած փոփոխութիւններից ես նկատեցի միայն այս, որ հեղինակը այլ ևս չի վերջացնում պիեսը այս խօսքերով՝ «թող փարատի խաւարը և ժամանակը կ'անէ իւր անելիքը», մի խօսք, որ, եթէ լիշում են ընթերցողներս, ես անտեղի էի համարել։ Մնացեալում պիեսը մնացել է նոյնը։ Ես օգտւում եմ դէպքից կրկնելու, որ պիեսը խաղացւում է բաւականի աշխոյժութեամբ. տեղ տեղ, մանաւանդ

երկրորդ և երրորդ գործողութիւններում՝ նոյն իսկ միջակ դերակատարութեամբ՝ տեսիլքները գրաւիչ են։ Գուցէ հայոց ոչ մի թատրոնական պիեսում սէրը այնքան լաջող արտայայտութիւններ չի ստանում, որքան «Վարժուհու» մէջ։

Խօսելով թատրոնի մասին, չի կարելի անուշադիր թողնել այն տպաւորութիւնները, որ արեցին հռչակաւոր դերասան Աղամեանի հիւանդութեան մասին հասած լուրերը։ Այդ լուրերը դեռ ևս մի քանի ամիս առաջ հասան մեր տեղային հասարակութեան ականջը։ Բայց պէտք է վկայել այս փաստը, որ այդ լուրերը սկզբում միմիայն խօսակցութեան առարկայ դարձրին մեր բեմի հերոսին, առանց որ ձեռաց ձեռնարկէր նրան դրամով շուտափութ օգնութեան հասնելու. տեղական լրագիրները մէկը միւսի յետևից հաստատեցին հիւանդի դրամական սղութիւնը։ Միմիայն այս լուսաւոր ամսում սկսեցին մտածել օգնութեան մասին։ Գործը սկսուեց վրաց թատրոնական խմբի մի ներկայացումից ս. Աղամեանի օգտին, ներկայացում, որին զլացաւ գալ վրաց հասարակութիւնը։ Ապա սկսուեց մասնաւոր ժողովարարութիւնը լրագիրների մէջ. յետոյ նոյն նպատակով տրուեց օպերային մի ներկայացում մեծ թատրոնում։ Այդ բոլորի հետեանքների մասին առ այժմ անկարող եմ մի որոշ բան հաղորդել, բայց ես չեմ կամենում առ-ի՛թ բաց թողնել հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրելու հետևեալի վերայ։ Ամեն անգամ երբ մի որ և իցէ դէպքի համար հասարակաց ժողովարարութեան պէտք է դիմել, պէտք է մի մասնաժողով կազմուի, որպէս զի ուր ինչ հաւաքւում է՝ յանձնուի այդ մասնաժողովին, որի պարտականութիւններից ամենագլխաւորն է լինում՝ տեղական թերթերում չարունակ յայտարարել ստացած և տեղը հասցրած գումարների մասին։ Սա մի տարրական բան եմ ասում։ Աղամեանը հիւանդ է, որպէս ասում են՝ կոկորդի տուբերկուլոզով։ Տխուր լուր։ Նա բոլորովին զուրկ է միջոցներից։ Տխուր հանգամանք։ Բայց ինչ անի մի մարդ, որը գիտցուք իւր մի ռուբլով ուղում է հիւանդին օգնել։ Դիցուք թէ հէնց նա այդ մի ռուբլին յանձնեց խմբագրութիւններից մէկին։ Շատ բարի, հաստատ է որ ռուբլին չի կորչելու։ Ռուբլին ստանալու մասին էլ յայտարարուեց։ Ապրիլով էլ մի 20 ր. հաւաքուեց մի խումբ պարոնների մէջ և ուղարկուեց մի ուրիշ լրագրի խմբագրութեան։ Մի ներկայացում, երկու ներկայացում տրուեցին նոյն նպատակով. արդիւնքը հասցրուեց Կ. Պոլիս։ Լսում է թէ Ռուսաստանում նոյնպէս ներկայացումներ են սարքում նոյն նպատակով։ Երեի Պոլսում էլ մի բան անում են։ Եւ ահա այս բոլորը լսելով՝ հասարակութեան ամեն մի անդամ մտածում է թէ ամեն տեղ արդէն փողեր են հաւաքում Աղամեանի օգտին։ Դէ այդ արդէն բաւական է որ հոգիները հանգստանան. ով գուցէ չը զլանար իւր մի քանի կոպէկն էլ գանձանակի մէջ գցելու, խլճի ամեն

հանգստութեամբ լետ է կանգնում, կարծելով թէ հարկաւոր եղածից գուցէ աւելի էլ է հաւաքուած։ Բայց շատ հեշտ կարող է պատահել թէ այն որ շատ է հաւաքել և թէ այն որ այդ բոլորը միայն զուր աղմուկի հետևանքն է ունեցել։

Դրութեան անորոշութիւնը սակայն կը պարզուի, երբ բոլոր հաւաքուած փողերը լատուկ դորա համար կազմուած մասնաժողովի ձեռքով կ'անցնեն։ Ներկայ դէպքում՝ այդպիսի մի մասնաժողով կազմելու հոգսը պէտք է քաշէին Թիֆլիսի դերասանները, որոնք իմ կարծիքով մի լաւ պարտք կատարելու դէպք ձեռքից բաց թողին։ Նոքա կարող էին հաւաքել և մի այդպիսի մասնաժողով կազմելու համար հարկաւոր դատուած քայլերը անել։

ԼՈՒՍԻՆԻ

ՑԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ։ Ես իմ անցեալ քրոնիկում Տարազ պատկերազարդ շաբաթաթերթին նկատել էի, որ նա էլ, մեր բոլոր միւս թերթերի հետ միասին, պ. Մուրացանի «Ռուզանի» բեմականութիւնից չլացած՝ այնքան կարող էր կուրանալ որ այդ դրամայի հիմնական գաղափարը, որ շատ անհամակրելի դուրս բերի իմ անցեալ քրոնիկում, աչքաթող էր արել։ Բայց որովհետև Տարազը, իւր № 3-ում առաջարկում է ինձ որ ես նորից կարդամ նորա յօդուածը այդ մարին, և անպատճառ առանց պենսնէի, առանց ակնոցի, ուստի ահա ես, փոխանակ այլ և այլ պատասխանների, ուղղակի առանց փոփոխութեան արտագրում եմ ալստեղ «Տարազ»-ի 1890 դեկտ. թերթում գրուածը Ռուզանի մասին և այն պատասխանը որ այդ թերթը տալիս է ինձ իւր այս տարուայ 3-րդ №-ում, առանձին չեշտելով այն խօսքերը, որ մանաւանդ վերաբերում են Ռուզանի գնահատութեան Տարազի կողմից։

«Տարազ» 1890 № 12, դեկտեմբեր.

«Ամսոյս 19-ին օպերային թատրոնում թատերասէրների մի այլ խումբ ներկայացրեց պ. Մուրացանի Ռուզան պատմական պիեսը. Ռուզանը մեր քոլոր դոքմական դիւցազներից գեղեցիկն է. Նրա մէջ չկան երկար մոնոլոգներ և լիբերտոն հեղուրդիր է ու ուրուուշ. մի կողմ թողնելով հոգեբանական շատ սխալները և համեմատելով մեր մինչև այժմ հրապարակի վերայ հրատարակուած պատմական պիեսների

«Տարազ» 1891 № 3, յունուար.

«Մուճ»-ում, Ամսայ քրոնիկի մէջ Ռուզան պիեսին վերաբերեալ մի յօդուածում պ. Լուսինին յարձակում է և մեզ վերայ, ասելով իբր թէ մենք ուրիշ լրագիրների հետ միասին «պիեսի բեմականութիւնից չլացած» կուրացել ենք և նորա բարոյականը աչքաթող արել։

Ախ, պ. Լուսինի, պ. Լուսինի, դուք սխալւում էք, այո, ասում ենք, դուք, այո, շատ սխալւում էք։ Մենք

հետ, Լուսանը մի մեծ բարուութիւն է։ Բնական լարմարութիւններ ունի, տնտարանները գեղեցիկ են և ոգեշունչ ղեղի հայն էլ առանց յուզմունքի անկարող է մինչև վերջը ուսան կերպով նայել Լուսանին։ Հարենիքի ազատութիւնը և բարօրութիւնը ձեռք բերելու համար Լուսանը թողնում է իւր սիրեցեալ փեսացու իշխանին և դիմադրելով ծնողներին, ազգականներին, զոհում է իրան թաթարաց իշխանին, ակամայ ընդունելով նրան կին լինել։

Մենք անշուշտ ուզի ն'ուսնենան մեր ընթերցողներին մի ուրիշ անգամ պատմել այդ պիեսի բովանդակութիւնը. բաւականանում ենք ասելու որ դա մեր գրականութիւնում էլ մեծ յաջողութիւն կ'ունենայ և մաշուած Շուշանիկ, Վարդանանց պատերազմ և այլն պիեսների փոխարէն՝ յանկարծ էր որ այդ գէնը դրէր։

բաւական քաղաքավարութիւն ունենք ձեզ չը կուրացնելու, բայց բարեհաճեցէք հանել ձեր պենանէն և կարդալ «Տարազ»-ի №-ը։ ուր կը տեսնէք որ մեր «Լուսան»-ը հոգեբանական գրքուոյթիւն էր համարել ու չէր արքանայրել նրան այն ուշադրութիւնը, ինչի որ դատ է արքանացնում... Ինչ վերաբերում է այդ պիեսի գրականութիւնից դուրս անելուն, մենք առհասարակ պոլիցիական միջոցներ չենք սիրում, իսկ եթէ նրան դուրս էլ անեն, դեռ մի բան անգամ չունենք՝ նրա պաշտպանութեան համար։

ԼՈՒՍԻՆԻ